



Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
2015 թվական թիվ 23

ԱՎԱՆԴՈՒՅԹ ԴԱՐՁԱԾ ՄԱՅԻՍՄԵԿՑԱՆ ԵՐԹ

2015 թվականի Աշխատանքի օրը Հայաստանի արհմիություններն անցկացրին ավանդական մայիսամեկյան երթ, որտեղ այս անգամ ևս գերակշռող էին պետական հիմնարկների աշխատողները՝ ավելի քան 350 մարդ: Մասնակիցները Մասիսի, Գավառի, Հրազդանի, Սևանի, Մարտունու, Արագածի, Դիլիջանի, Իջևանի տարածքներից էին, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունից, ՀՀ ԱՎԾ-ից, ՀՀ ԿԱ ՊԳԿՎ-ից, Հայաստանի պատմության թանգարանից, ՀՀ կառավարության աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ից, «Զատիկ» երեխաների խնամքի և աջակցության կենտրոնից, ՀՀ ԲՍՓ գործակալությունից, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից, ՀՀ Էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններից, Խարբերդի մասնագիտացված մանկատանից, իսկ կարգախոսներն էին «Համայնքային ծառայողին՝ արժանապատիվ աշխատավարձ», «Աշխատավոր մարդուն՝ արժանապատիվ աշխատանք, արժանապատիվ աշխատավարձ», «Ուժեղ արհմիություն, ուժեղ քաղաքացիական հասարակություն», «Արհմիության ուժը միասնության մեջ է, անդամակցեք արհմիություններին» և այլն:

Երթի կազմակերպիչը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան էր, մասնակցում էին նաև ներկայացուցիչներ տարբեր ճյուղային արհմիություններից:

Պետհիմնարկների արհմիութենականների մայիսամեկյան միջոցառումներն ամփոփվեցին ավանդական դարձած կինոդիտմամբ:

Շնորհակալ ենք միասնականության և համախմբվածության համար:

Երթը լուսաբանող լրատվամիջոցների հղումները տեղադրված են նաև ՀԱՄԿ-ի կայքում և Հայաստանի պետհիմնարկների արհմիության ֆեյսբուքյան էջում:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՉ ՉԻ ՀԱՄԱՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՕՐԵՆՔՈՎ ՄԱՀՄԱՆԵԼԸ

ՃՀՄ տեղեկագրի ընթերցողը նախորդ համարից տեղյակ է համայնքային ծառայողների աշխատավարձերի կարգավորմանն ուղղված ՃՀՄ նախագահի՝ ՀՀ վարչապետին ուղղված գրության մասին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա.Պետրոսյանը պատասխան գրությամբ ներկայացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների համատեղ դիրքորոշումը. այն է՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՀՀ կառավարության գործունեության ծրագրերին համապատասխան դեռևս 2006 թվականից նախաձեռնել էր կանոնակարգել բոլոր հանրային ծառայողների վարձատրության խնդիրները վարձատրության միասնական համակարգի ներդրմամբ՝ Հանրային ծառայողների վարձատրության հայեցակարգի նախագծի շրջանակներում: Վերոհիշյալ հայեցակարգը կարծիքի է ներկայացվել նաև միջազգային փորձագետներին, որի շրջանակներում միջազգային փորձագետների դիրքորոշման համաձայն՝ պետության միջամտությունը համայնքային ծառայողների վարձատրության կանոնակարգման հարցերում կարող է սահմանափակվել միայն աշխատավարձի նվազագույն չափի սահմանմամբ:

Հայեցակարգի նախագծի մշակման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, մասնագիտական և շահագրգիռ քննարկումների արդյունքները, ինչպես նաև միջազգային փորձը հաշվի առնելով ձևավորվել են հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգի ապահովման հիմնական սկզբունքները, մոտեցումներն ու շրջանակը, որոնք ամրագրված են 2013 թվականին դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում:

Մյուս կողմից, հատկանշանական է նաև, որ համայնքային ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները ևս կարգավորված են օրենքով, որի հիմքում ընկած են տեղական ինքնակառավարման կազմակերպման, այդ թվում՝ համայնքային ծառայության հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները:

Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 31-րդ հոդվածներով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով, ինչպես նաև «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով արդեն իսկ կարգավորված են համայնքի աշխատակազմի աշխատակիցների վարձատրության հետ կապված հիմնական հարաբերությունները, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի առավելագույն շեմը, պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելումների և հավելավճարների կիրառման կարգն ու պայմանները, ամսական աշխատավարձի նվազագույն չափը և այլն: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու բացառիկ լիազորությունը վերապահված է համայնքի ավագանուն, որն իր այդ լիազորությունն իրականացնում է վերը նշված կարգավորումների սահմաններում՝ հաշվի առնելով համայնքի բյուջեի հնարավորությունները:

Հետևաբար, վերոգրյալով պայմանավորված գտնում ենք, որ համայնքային ծառայողների աշխատավարձերի չափը սահմանելու վերաբերյալ առանձին օրենքի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է»:

ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ

✓ «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի նախաձեռնությամբ Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա. Ասատրյանը հանդիպում է ունեցել ՀՀ ԱԺ պատգամավոր, «Հայաստանի ավագանիների սանցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ընթացքում երկուստեք քննարկվել են համայնքային ծառայողների աշխատավարձերի կարգավորման հնարավոր տարբերակներ: ՃՀՄ նախագահն անհրաժեշտ է համարել համայնքային ծառայողների վարձատրության միասնական սկզբունքի ներդրման օրենսդրական կարգավորումը:

✓ Համայնքային ծառայողների աշխատավարձերի կարգավորման խնդրի շուրջ ճյուղային արհմիության տեսակետը ներկայացրել է նաև ՃՀՄ աշխատակից Ռ.Օհանջանյանը Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման հյուսիսարևելյան հատվածի՝ Վիլնյուս քաղաքում կայացած հերթական հանդիպման ժամանակ: Ռ.Օհանջանյանը մասնակիցներին առաջարկել է տեղեկություններ տրամադրել համայնքային ծառայողների աշխատավարձերի կանոնակարգման շուրջ:

ՆՊԱՍՏԵՆՔ «ՊՐՈՖՏՈՒՐ»-Ի ԿԱՅԱՑՄԱՆԸ

«Պրոֆտուր» ընկերությունը շարունակում է կազմակերպել աշխատողների հանգիստը սոցիալաթերթի շրջանակներում՝ որպես «Բվանտ» օպերատորի գործակալ՝ առաջարկելով հանգիստ Հայաստանի և Արցախի ավելի քան 50 ուղղություններով:

Սոցիալաթերթից դուրս ընկերության ծառայություններից օգտվող արհմիության անդամները ևս կսպասարկվեն զեղչերով՝ ՃՀՄ նախագահության որոշմամբ սահմանված կարգով:

«Պրոֆտուրի» զարգացումը ամրապնդում է արհմիության ֆինանսական հենքը:

**ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ
ՍԱԿԱԳՆԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման կապակցությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Է. Թումասյանը գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ կիսելով ոչ միայն աշխատողների, այլ նաև հանրապետության ողջ բնակչության մտահոգությունը: Գրության մեջ մասնավորապես նշվում է. «Սոցիալական ճգնաժամի խորացումն անխուսափելի է բոլոր տեսակի թանկացումների դեպքում, որին հաջորդում է աշխատողների, նրանց ընտանիքների անդամների և ողջ բնակչության կենսամակարդակի անկումն ու անապահով ընտանիքների քանակի աճը: 2014թվականի օգոստոսի 1-ից հոսանքի սակագնի, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված ապրանքների թանկացումը բարդ խնդիրների առջև կանգնեցրեց բնակչությանը: Հայաստանում, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, բնակչության յուրաքանչյուր երրորդը աղքատ է և էլեկտրաէներգիայի նոր թանկացումը կհանգեցնի աղքատության մակարդակի բարձրացմանը»:

Շարունակական գնաճը խոչընդոտում է յուրաքանչյուրի բավարար կենսամակարդակի բարելավման իրավունքին, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով: Ուստի ՀԱՄԿ-ը կարևորում է էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեպքում առաջացող սոցիալական լարվածությունը զսպող մեխանիզմների անհրաժեշտությունը:

Ավելի վաղ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան նշված խնդրով հանդես էր եկել հայտարարությամբ, որի ամբողջական տեքստին, ինչպես նաև ՀՀ ԱԺ նախագահին ուղղված գրությանը կարող էք ծանոթանալ ՀԱՄԿ-ի կայքում:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նոր նախագիծը, որում տեղ են գտել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մի շարք առաջարկներ: Մասնավորապես՝ նախագծում առաջարկվում է կիրառությունից հանել աշխատանքային գրքույկները, ինչը պայմանավորված է անձնավորված հաշվառման համակարգի ներդրմամբ, նախատեսվում է աշխատանքային պայմանագրում ամրագրել փորձաշրջանի պայմանները, ամենամյա աձակուրդի տեսակները, տևողությունը, հստակ կսահմանվի «մասնագիտական աշխատանքային ստաժ» հասկացությունը, 65 տարին լրացած աշխատող անձը կարող է շարունակել աշխատել որոշակի սահմանափակ ժամկետով, կանոնակարգվում են անչափահասների աշխատանքային հարաբերությունները, ամրագրվել են այն ոլորտները, որոնցում մինչև 14 տարեկան անչափահասը իրավունք ունենա աշխատել և այլն:

Փաթեթը ներկայացվել է Ազգային ժողովի քննարկմանը:

ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի պետ Մ.Փիլիպոսյանը լրատվամիջոցներին առավել հանգամանորեն է ներկայացրել փոփոխությունների փաթեթը, որը ներկայացված է ՀԱՄԿ-ի կայքում:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

✓ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը ՀԱՄԿ-ի դահլիճում կազմակերպել էր ոգեկոչման միջոցառում: Հայաստանի պատմության թանգարանի արհմիության անդամ, նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ Ս.Գալստյանը ճյուղային արհմիության Երևան քաղաքի անդամ կազմակերպությունների արհմիության անդամներին ներկայացրեց 1915թ. Ցեղասպանության մասին ամփոփ դասախոսություն տեսապատկերների ուղեկցությամբ: Ներկայացվեցին դրվագներ ոչ միայն 1915-ի ոճրագործությունների, այլև դրան նախորդող ու հաջորդող ժամանակաշրջաններից:

Ճյուղային միության աշխատակազմի աշխատողները ՀԱՄԿ-ի և մյուս ճյուղայինների ներկայացուցիչների հետ այցելել են նաև Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին:

✓ ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնը Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի աջակցությամբ մայիսի վերջին Ծաղկաձորում անցկացրեց արհմիութենական ուսուցում «Երիտասարդության խթանումը արհմիություններում» թեմայով: Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը սեմինարում ներկայացնում էր ՀՀ ԱՎԾ արհմիության երիտասարդ անդամ Տաթևիկ Մեհրաբյանը:

✓ Մայիսի 9-ին Ճյուղային հանրապետական միության աշխատակազմը հարգանքի տուրք մատուցեց Հայրենական մեծ պատերազմում հազարավոր հայորդիների կորուստը խորհրդանշող Անհայտ զինվորի շիրիմին:

✓ ՃՀՄ նախագահության որոշմամբ Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը կնքել է պայմանագրեր Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանի և Գրողների ստեղծագործական տան հետ, որոնք հնարավորություն են տալիս արհմիության անդամներին ծաղկաձորյան հանգիստը վայելել համապատասխանաբար 8000 և 8800 դրամներով: Արհմիութենական կուլեկտիվների հանգիստը խրախուսվում է լրացուցիչ զեղչերով:

✓ Հայաստանի պետհիմնարկների ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Ա. Սաստրյանը պարգևատրվել է ՀԱՄԿ-ի պատվոգրով արհմիութենական ակտիվ գործունեության և ծննդյան 50-ամյակի կապակցությամբ: Տեղեկագրի խմբագրակազմը շնորհավորում է Ա.Սաստրյանին արժանի պարգևի կապակցությամբ, մաղթում հաջողություններ, անսպառ եռանդ:

ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԱՆԴԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի մեքենաշինարարների և սարքաշինարարների աշխատողների ճյուղային արհմիությունը 2013 թվականի մայիսի 16-ին տեղի ունեցած արտահերթ համագումարում միավորվել է Հայաստանի քիմիական արդյունաբերության ճյուղերի աշխատողների ճյուղային արհմիության հետ՝ միաձուլման ձևով վերակազմակերպման մասին որոշմամբ, սակայն, չգիտես ինչու, նորաստեղծ միությունը անվանվել է «Հայաստանի արդյունաբերության աշխատողների ճյուղային հանրապետական միություն», չնայած դրա իրավունքը չուներ, քանզի մեր երկրում արդեն գործում են արդյունաբերության տարբեր ճյուղերի արհմիություններ:

Նշված միության նախագահը հայտարարում է, որ արհմիություններում գոյություն չունի ոլորտի սկզբունք և ներխուժում է պետական հիմնարկների և ՏԻՄ-երի ոլորտ. այդ կապակցությամբ Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային արհմիությունը հայտարարում է, որ համաձայն «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը իրավաբանական անձանց միություն է, որը «միավորում է տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղում (հարակից ճյուղերում) գործող արհեստակցական միությունների կեսից ավելին, որոնց անդամագրված են տվյալ ճյուղի առավելագույն թվով աշխատողներ: Միաժամանակ հիշեցնում ենք, որ **պետական հիմնարկների, տեղական կառավարման և ինքնակառավարման մարմինների աշխատողների արհեստակցական կազմակերպությունները միավորվում են** Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կազմում՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից գրանցված կանոնադրության: **Կոչ ենք անում մեր անդամ կազմակերպությունների ղեկավարներին զգոն լինել և թույլ չտալ ինքնակոչ կազմակերպություններին խոչընդոտել ոլորտի արհմիությունների կանոնադրական գործունեությանը:**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

***ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՅԻԱՅԻ ՆԱԽՈՂԴ ՏԱՐԻՆ
ԱՄՓՈՓՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ***

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիությունն այս տարվա մայիսի 25-28-ը հյուրընկալեց Պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) խորհրդի անդամներին: Ժամանակները Բելառուսի, Մոլդովայի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Լատվիայի, Իսրայելի պետական հիմնարկների աշխատողների արհմիությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ էին:

Մայիսի 27-ին կայացած նիստում բացման խոսքով, օրակարգային հարցերի ներկայացմամբ, մասնակիցներին արդյունավետ աշխատանքի մաղթանքներով հանդես եկավ ԱՄՖ նախագահ Վլադիմիր Սավչենկոն:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Է. Թումայանը նիստում ևս հանդես եկավ ելույթով՝ ընդգծելով Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության դերը հանրապետության արհմիութենական շարժման մեջ:

Նիստին մասնակցում էին նաև ճյուղային հանրապետական արհմիության 2003-2013թթ. նախագահ Ե.Հակոբովան, ԱՄՖ աշխատակազմի ներկայացուցիչներ, Հայաստանի պետհիմնարկների արհմիության խորհրդի և նախագահության անդամներ, «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Լ.Բադալյանը:

Օրակարգային հարցերի շրջանակում խորհրդի անդամները քննարկեցին Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի անդամ երկրների արհմիութենական խնդիրները, անդամ կազմակերպություններում էլեկտրոնային միասնական շտեմարանը զարգացնելու անհրաժեշտությունը, ամփոփեցին տարեկան վիճակագրական տվյալները, ֆեդերացիայի նախորդ տարվա եկամուտներն ու ծախսերը, հաստատեցին 2015-ի տարեկան բյուջեն, ներկայացվեցին ԱՄՖ անդամ երկրների սոցիալ-տնտեսական խնդիրները, առաջարկվեցին արհմիությունների կողմից դրանց լուծման ուղիներ, խրախուսվեցին արհմիության անդամների թվաքանակի զգալի աճ գրանցած երկրների ամիությունների ղեկավարները և այլն:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանն իր ելույթում առավել հանգամանորեն ներկայացրեց այն խնդիրները, որոնք այսօր ունեն Հայաստանի պետհիմնակներում աշխատողները: ՃՀՄ նախագահն անդրադարձավ նաև նախորդ տարում իրականացված արհմիութենական միջոցառումներին ու հետագա ծրագրերին, կարևորեց արհմիության երիտասարդական թևի ձևավորումը և այլն:

Ա.Ասատրյանի ամբողջական ելույթը ներկայացված է www.arhmiutyun.org կայքում:

Օրակարգային բոլոր հարցերն ամփոփվեցին խորհրդի համապատասխան որոշումներով:

Նշենք նաև, որ նախորդ օրը ԱՄՖ պատվիրակության անդամները պաշտոնական հանդիպում են ունեցել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Է.Թումայանի հետ: Հանդիպման ընթացքում ՀԱՄԿ-ի նախագահ Է.Թումայանը հյուրերին ծանոթացրել է ՀԱՄԿ-ի կառուցվածքին, գործառույթներին, հանրապետությունում արհմիության առջև ծառայած խնդիրներին, կարևորել է ՀԱՄԿ-ի երիտասարդ կադրերի պատրաստվածության խնդիրը և այլն:

Մտքերի փոխանակման ընթացքում հյուրերը առաջարկել են համագործակցությունը դարձնել շարունակական: Ավելի մանրամասն՝ տես www.hamk.am կայքում:

Պաշտոնական միջոցառումներից զատ հյուրերը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք են մատուցել հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ծանոթացել են ցեղասպանության պատմությանը, այցելել են Հայաստանի պատմամշակութային այլ վայրեր:

**ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՉՄԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

2015թ. հունիսի 6-ից 12-ը Հայաստանում էր գտնվում Ռուսաստանի Դաշնության նախագահի գործերի կառավարչության ձեռնարկությունների արհեստակցական կազմակերպության նախագահ Անտոնիյ Կորոլյովի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակության ներկայացուցիչները հունիսի 9-ին Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության գրասենյակում հանդիպում ունեցան արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանի և աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում երկու կողմերը ներկայացրեցին իրենց ներկայացրած միությունների կառուցվածքը, երկու երկրներում արհմիությունների հնարավորությունները, գործունեության հիմնական ուղղությունները, արհմիության խնդիրները և այլն:

Մտքերի փոխանակման ընթացքում երկուստեք առաջարկվեց համագործակցությունը շարունակական դարձնել:

Պատվիրակության անդամները Հայաստան այցի ընթացքում այցելեցին Հայոց ցեղասպանության թանգարան, հարգանքի տուրք մատուցեցին 1915թ. զոհերի հիշատակին, ծանոթացան մեր պատմամշակութային արժեքներին, եղան տեսարժան վայրերում՝ Էջմիածնում, Մարդարապատում, Զվարթնոցում, Գառնիում, Գեղարդում, Սևանում, Ծակաձորում, Խոր Վիրապում և այլուր:

**ՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԵՄԻՆԱՐ ԳԱՎԱՌՈՒՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ**

Հունիսի 19-ին Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային հանրապետական արհմիությունը Գավառի տարածքի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության հետ համատեղ Գավառ քաղաքում անցկացրեց սեմինար միության անդամ կազմակերպությունների ղեկավարների, հաշվապահների, արհմութենական ակտիվի համար:

Սեմինարն աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ էր:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը մասնակիցներին ներկայացրեց Հայաստանի պետհիմնարկների արհմիության գործունեությունը, հանրապետությունում արհմիությունների նշանակալի դերը, արհմիութենական շարժման զարգացման նշանակությունը, հեռանկարները և այլն:

Սեմինարի 25 մասնակիցների՝ աշխատանքային հարաբերություններին վերաբերվող հարցերին սպառնիչ պատասխաններ տվեցին նաև ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի պետ Մ.Փիլիպոսյանը և ճյուղային արհմիության գլխավոր հաշվապահ Ռ.Օհանջանյանը: Իսկ բարձրացված հարցերի շրջանակը լայն էր՝ աշխատանքային օրենսգրքի դրույթներից, կենսաթոշակային համակարգից, ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստներից, եկամտահարկից, ստաժից և աշխատանքային հարաբերություններից բխող այլ թեմաներից:

Սեմինարը լուսաբանվել է տեղական հեռուստաընկերությամբ:

ՃՀՄ անդամ կազմակերպությունների նախագահներին

✓ Կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվետու-ընտրական ժողովներ չանցկացրած անդամ կազմակերպությունների նախագահներին առաջարկում ենք կազմակերպության ղեկավար մարմինների օրինականությունը պահպանելու համար անհապաղ ժողովներ անցկացնել:

✓ Հայաստանի պետհիմնարկների արհմիության 85-ամյակի հետ կապված միջոցառումների շրջանակում նախատեսված գրքի տպագրության աշխատանքներն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է Ձեր ղեկավարած կազմակերպությունը բնութագրող տեղեկատվություն և նախագահի լուսանկար՝ էլեկտրոնային տարբերակով:

ՄԱԿ-ի գերագույն վեհաժողովը հունիսի 23-ը հռչակել է որպես Հանրային ծառայությունների օր: Օրվա խորհուրդը հասարակության զարգացման գործում հանրային ծառայությունների կարևորությունն ու դերը հենց հասարակությանն իրազեկելն է. այս նպատակով ողջ աշխարհում իրականացվում են լայնածավալ միջոցառումներ:

2015 թվականին Օրվա գլխավոր խորհուրդը անդրազգային առևտրային պայմանագրերի վտանգն է, որոնք ներկայացվել էին նաև Եվրախորհրդարանի վավերացմանը: Ի դեպ, հարցի քննարկումը, ավելի ուշ ստացված տեղեկություններով, հետաձգվել է մինչև նոյեմբեր: Աշխարհում հասարակական սպասարկման ոլորտի խոշորագույն արհմիութենական կառույց համարվող Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման (European Federation of Public Service Unions (EPSU) 50-րդ նիստում որոշում է ընդունվել շարունակական պայքար տանել հանրային ծառայությունների ոլորտը նշված պայմանագրերից դուրս բերելու ուղղությամբ:

Հանրային ծառայությունների ոլորտում երկրորդ կարևոր խնդիրը միջազգային կորպորացիաների կողմից հարկերից խուսափելն է:

Հասարակական սպասարկման ինտերնացիոնալի (Public services international (PSI) նախագահ Ռոգա Պավանելլին Հունիսի 23-ի կապակցությամբ, հայտարարել է.

«Մենք բոլորս պարտավոր ենք վճարել հարկեր. ինչու դա չպետք է անեն համաշխարհային կորպորացիաները: Հասարակական սպասարկման ինտերնացիոնալը, արհմիութենական միջազգային շարժումը և քաղաքացիական հասարակության մեր գործընկերները մտադիր են վերջ դնել հարկերից խուսափելու գլոբալ մեխանիզմներին, որոնք ամբողջ աշխարհում երկրների բյուջեները զրկում են միլիարդավոր դոլարներից: Իսկ այդ միջոցները կարող էին ուղղվել հանրային այնպիսի ծառայությունների որակի ապահովմանը, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, ջրամատակարարումը, աղբահանությունը»:

Արհմիութենական շարժումը վաղուց է դատապարտում հարկային գլոբալ օրենքները, որոնք հնարավորություն են տալիս խոշորագույն համաշխարհային կորպորացիաներին չվճարել իրենց հասանելիք հարկերը, ընդ որում, դրանք հենց այն ընկերություններն են, որոնք պատրաստվում են է՛լ ավելի մեծ իշխանություն ստանալ շնորհիվ Տրանս-Պացիֆիկ Գործընկերության, Տրանս-ատլանտիկ առևտրային-ներդրումային պայմանագրերի, որոնք պետք է կնքվեն ԱՄՆ-ի, ԵՄ-ի և այլ գերտերությունների միջև:

Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիությունը, հանդիսանալով վերը նշված կառույցների անդամ, ևս միանում է աշխարհի արհմիութենական շարժմանը՝ հանդես գալով աշխարհում հանրային ծառայությունների սեփականաշնորհման դեմ և պահանջում՝

ԳԼՈՒԲԱԼ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ. համընդհանուր միջկառավարական հարկային մարմին, որը կկոորդինացնի հարկային քաղաքականությունը

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ. հասարակությունը պետք է իմանա ստացված եկամուտների, ինչպես նաև յուրաքանչյուր երկրում կորպորացիաների կողմից վճարված հարկերի մասին

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ՝ հանրային անվճար ծառայությունների որակը ապահովելու համար:

ՄԱԿ-Ը ԵՎՍ ՄՏԱՀՈԳՎԱԾ Է

Միավորված ազգերի կազմակերպության փորձագետները ևս հանդես են եկել հայտարարությամբ, որտեղ իրենց մտահոգությունն են հայտնել անդրազգային առևտրային պայմանագրերի՝ մարդու իրավունքների վրա բացասաբար ազդելու կապակցությամբ: Նրանք քննադատում են բանակցությունների թաքուն ընթացքը, ներդրողների և պետությունների միջև հարաբերությունները, քանի որ դրանք ելնում են ոչ թե պետության և հասարակության, այլ՝ ներդրողների շահերից:

ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ը ԳՈՐԾԱդՈՒԼԻ ՕՐ

Փետրվարի 18-ը Արհմիությունների Միջազգային Կոնֆեդերացիայի (ITUC) կողմից հայտարարված է որպես գործադուլի իրավունքի պաշտպանության համար գործողությունների օր: Այս տարի աշխարհի ավելի քան 60 երկրներում անցկացվել են 100-ից ավելի ակցիաներ, որոնք տպավորություն են թողել կառավարությունների ու գործատուների վրա: Առանց գործադուլի իրավունքի չի կարող պաշտպանված լինել նաև աշխատողների միավորվելու, կոլեկտիվ պայմանագրերի կազմակերպման և վարման իրավունքը:

Կոնֆեդերացիայի-ի գլխավոր քարտուղար Շարան Բարրոուն այս առիթով հայտարարել է. «ԱՄԿ-ի հավատարմությունը «Ասոցիացիայի ազատության և կազմակերպման իրավունքի պաշտպանման մասին» N87 կոնվենցիային միանշանակ է, և մեր համերաշխությունը ցույց է տալիս, որ մենք միշտ պայքարելու ենք այդ իրավունքի համար: Այս փուլում սոցիալական երկխոսությունը կրկին ապացուցեց, որ այն աշխատում է: Մենք շարունակելու ենք պայքարել և հասնելու ենք միջազգային իրավունքի մաս կազմող արդարությանը այն աշխատողների համար, որոնք չունեն արժանապատիվ աշխատանք:» Նա նաև իր երախտագիտությունն է հայտնել փետրվարի 18-ի գործողություններին համերաշխություն ցուցաբերելու համար:

Գործադուլի արգելքի դեպքերն հաճախ են հանդիպում հատկապես հասարակական սպասարկման ոլորտում, ինչը խիստ մտահոգիչ է նաև արհմիութենական խոշորագույն կառույցի՝ Հասարակական սպասարկման ինտերնացիոնալի համար: Վերջինս, Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի և այլ արհմիությունների հետ համատեղ կոչ է արել պաշտպանել և խթանել աշխատողների գործադուլի իրավունքը ամբողջ աշխարհում:

Հայաստանի պետիմնարկների արհմիությունը ևս գտնում է, որ գործադուլի իրավունքը աշխատողների իրավունքի անբաժան մասն է կազմում և միանում է Արհմիությունների Միջազգային Կոնֆեդերացիայի պահանջին՝ հարգել Աշխատանքի Միջազգային Կազմակերպության N87 կոնվենցիայով ամրագրված գործադուլի իրավունքը:

«ԱՐԵՆԱ»-ՈՒՄ ԿՐԿԻՆ ԱՐԶՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐՆ ԷԻՆ

Հերթական անգամ անցկացվեց Հայաստանի պետիմնարկների արհմիության բուլվինգի առաջնությունը: Մասնակիցներն էին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Պետական գույքի կառավարման վարչության, Երևանի քաղաքապետարանի, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Արաբկիր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության, ՀՀ զբաղվածության ծառայության, Խարբերդի մասնագիտացված մանկատան, «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի պատմության թանգարանի թիմերը: Երրորդ անգամ թիմային առաջնությունում առաջին տեղը զբաղեցրավ և ճյուղային արհմիության գավաթին արժանացավ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիմը: Երկրորդ տեղը զբաղեցրավ և արժաթե մեդալակիր դարձավ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի թիմը, իսկ երրորդ տեղն զբաղեցրեց ՀՀ ոստիկանության ոչ ծառայողների թիմը:

Անհատական հաշվով ճյուղային միության գավաթին արժանացավ Ալեքսանդր Բալբաբյանը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից, 2-րդ և 3-րդ տեղերը լրացուցիչ խաղի արդյունքում համապատասխանաբար կիսեցին Ալբերտ Բաբայանը՝ նույն նախարարությունից և Ներսես Մանուչարյանը՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից:

Մասնակից բոլոր թիմերն արժանացան դիպլոմների: